ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1256 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2339-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու միջոցառումը և կարգը հաստատելու մասին» N 2339-Լ որոշման՝

1) N 1 հավելվածում՝

ա. 3-րդ կետի 7-րդ ենթակետից հանել «, ինչպես նաև կենսաթոշակային քարտը թողարկած բանկի բանկոմատներում և նույն բանկի էլեկտրոնային հավելվածի միջոցով կոմունալ ծառայությունների (գազի, էլեկտրաէներգիայի, խմելու ջրի, ֆիքսված և բջջային հեռախոսի մատակարարման ծառայություններ) դիմաց կատարված վճարումներից» բառերը,

բ. 4-րդ կետում «10» թիվը փոխարինել «12» թվով,

գ. 5-րդ և 6-րդ կետերում «5000» թվերը փոխարինել «6000» թվերով.

2) N 2 հավելվածում՝

ա. 4-րդ կետը «վճարվում է» բառերից հետո լրացնել «(ծառայությունը բանկին փոխանցում է)» բառերով,

բ. 5-րդ կետում «Հետվճարները հաշվարկվում և վճարվում են» բառերը փոխարինել «Հետվճարները հաշվարկում և վճարում է ծառայությունը՝» բառերով,

գ. 7-րդ կետում «՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը» բառերը փոխարինել «(«Էքսել» ֆորմատի ֆայլով, «յունիկոդ» տառատեսակով)՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը» բառերով,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին կետով.

«7.1. Սույն կարգի 7-րդ կետում նշված տվյալները բանկի կողմից ծառայությանը մեկից ավելի անգամ տրամադրելու դեպքում հիմք է ընդունվում սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված վերջին տվյալը: Ընդ որում, յուրաքանչյուր անգամ տրամադրվում են ամբողջական տվյալներ:»,

ե. 8-րդ կետում «կազմում է վճարման ցուցակ:» բառերը փոխարինել «սույն կարգի N 3 ձևով սահմանված տվյալները (այսուհետ՝ վճարման ցուցակ) մինչև տվյալ ամսվա 25-ը տրամադրում է բանկին: Վճարման ցուցակում հետվճարի գումարները կլորացվում են մինչև միավոր:» բառերով,

զ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Բանկը հետվճարը պետական բյուջե չի վերադարձնում, բացառությամբ սույն կետում նշված դեպքերի: Բանկային հաշիվը փակված լինելու կամ տեխնիկական պատճառներով հաշվին չփոխանցելու դեպքում շահառուի դիմումի հիման վրա հետվճարի գումարը վճարում է բանկը՝ իր սահմանած եղանակով (կանխիկ կամ անկանխիկ): Հետվճարը բանկին փոխանցելու ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում չվճարելու դեպքում բանկը գումարը վերադարձնում է պետական բյուջե՝ միաժամանակ ծառայությանը տրամադրելով սույն կարգի N 2 ձևով սահմանված տվյալները: Սույն կետում նշված 12-ամսյա ժամկետից հետո հետվճարը վճարման ենթակա չէ:»,

է. 9-րդ և 11-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) N 1 ձևի՝

ա. 4-րդ կետում «Պարբերական դրամական վճարի գործի համարը և հետվճարի» բառերը փոխարինել «Հետվճարի» բառով,

բ. 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5. Անկանխիկ գնումների և վճարումների կատարման ամիսը, տարեթիվը, ցանկն ուղարկելու օրը, ամիսը, տարեթիվը:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 3 ձևով.

«**Ձև N 3**

Ց Ա Ն Կ

ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).

2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.

3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.

4. Վճարման ենթակա հետվճարի գումարի չափը.

5. Վճարման ցուցակն ուղարկելու օրը, ամիսը, տարեթիվը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այդ օրվան հաջորդող ամսվա 1-ին և դրանից հետո ծագած հարաբերությունների (կատարած անկանխիկ վճարումների) վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

09.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ